

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (SS) ԸՆՏՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռաշտ դուրս գալուց առաջ Ձեր խմբավարը Ձեզ կտա ընտրված տնային տնտեսությունների ցանկը (որն ընդգրկում է ընտրված քաղաքի, փողոցի անունը, շենքի, բնակարանի համարը, և SS գլխավորի անունը), որտեղ պետք է անցկացնեք Ձեր հարցումները: Նա Ձեզ կբացատրի նաև SS-ների այցելության այն օպտիմալ հերթականությունը, որը Ձեզ հնարավորություն կտա առավել քիչ ժամանակ ծախսել մի SS-ից մյուսին անցնելու համար:

Հրահանգներ հարցվողների ընտրության վերաբերյալ

Նախընտրելի է, որպեսզի դաշտային աշխատանքները հարցազրուցավարները կատարեն ոչ աշխատանքային ժամերին՝ երեկոյան և հանգստյան օրերին:

Յուրաքանչյուր հարցազրուցավար կողողինատորից կստանա տվյալ կլաստերի հասցեների ցուցակը, որոնք նա պետք է այցելի և որտեղ պետք է անցկացնի հարցազրույցը: Մեր հետազոտության ընթացքում տնային տնտեսությունների, որտեղ ինչ-որ պատճառով չի հաջողվել հարցում անցկացնել, հասցեների փոխարինում **չի թույլատրվում**. Բոլոր այն դեպքերում, երբ հարցազրույց չի անցկացվել, հարցազրուցավարը նշում է հարցաթերթի երկու մասերի տիտղոսաթերթերի վերջում տեղակայված ՉՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐԻ ԹԵՐԹԻԿՈՒՄ:

ՉՊԱՏԱՍԽԱՆՈՂ կարող է նշվել ինչպես տնային տնտեսության հարցաթերթի, այնպես էլ անհատական հարցաթերթի համար: Այն դեպքում, երբ ՉՊԱՏԱՍԽԱՆՈՂ նշված է տնային տնտեսության համար, **մի փորձեք** անցկացնել անհատական հարցազրույց. այն անթույլատրելի է տնային տնտեսության հարցաթերթի չլրացման պայմաններում, հակառակ դեպքում այն կհամարվի խոտան: Մյուս կողմից, ՉՊԱՏԱՍԽԱՆՈՂ -ը թույլատրելի է անհատական հարցաթերթի համար, եթե լրացված է տնային տնտեսության հարցաթերթը. տնային տնտեսության լրացված հարցաթերթը կմշակվի (պայմանով, որ այն որակյալ է լրացված), անգամ եթե տվյալ տնային տնտեսությունում անհատական հարցազրույցի համար նշված է ՉՊԱՏԱՍԽԱՆՈՂ:

Բացի հարցաթերթի երկու մասերի տիտղոսաթերթերի վերջում տեղակայված ՉՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐԻ ԹԵՐԹԻԿՈՒՄ հրաժարվելու փաստի արձանագրումից, մենք խնդրում ենք Ձեզ այն նշել նաև առանձին թղթի վրա, որը Ձեզ կբաժանի Ձեր կողողինատորը:

1. Տվյալ հասցեում մի քանի տնային տնտեսությունների առկայության դեպքում տնային տնտեսության ընտրությունը.

Մեր ընտրանքում ընդգրկված տնային տնտեսության հասցեն այցելելիս, հարցազրուցավարն առաջին հերթին պետք է հարցնի. **“Քանի տնային տնտեսություն է ապրում տվյալ բնակարանում”**:

Եթե տվյալ բնակարանում ապրում է ավելի քան մեկ տնային տնտեսություն, հարցրեք բոլոր տնային տնտեսությունների այդտեղ բնակվող գլխավորների ծննդյան օրերը և հարցազրույցն անցկացրեք այն տնային տնտեսությունում, որի գլխավորի ծննդյան օրը վերջինն է եղել: Եթե տվյալ տնային տնտեսությունն ինչ-որ պատճառով հրաժարվել է մասնակցել հարցազրույցին, **Մի ՓՈՐՉԵՔ** հարցազրույցն անցկացնել այդ հասցեում բնակվող մյուս տնային տնտեսության հետ, այլ նշեք է ՉՊԱՏԱՍԽԱՆՈՂ:

Այն դեպքում, երբ միևնույն հասցեում բնակվող տնային տնտեսությունների գլխավորների ծննդյան օրերն համընկնում են, վիճակահանության միջոցով որոշեք նրանցից մեկին, որտեղ և կանցկացնեք հարցազրույցը: Այս անգամ ևս, եթե տվյալ տնային տնտեսությունն ինչ-որ պատճառով հրաժարվում է մասնակցել հարցազրույցին, **Մի ՓՈՐՉԵՔ** հարցազրույցն անցկացնել այդ հասցեում բնակվող մյուս տնային տնտեսության հետ, այլ նշեք է ՉՊԱՏԱՍԽԱՆՈՂ:

2. Տնային տնտեսության հարցազրույցի համար հարցվողի (հարցվողների) ընտրությունը.

Տնային տնտեսության հարցազրույցին կարող են մասնակցել տնային տնտեսության չափահաս մեկ կամ երկու անդամ, որոնք բոլորից լավ են տեղեկացված տնային տնտեսության վիճակի (մասնավորապես տնտեսական վիճակի) մասին: Ուշադիր ուսումնասիրեք տնային տնտեսության հարցաթերթի տիտղոսաթերթում առկա հրահանգները և ճշտությամբ հետևեք դրանց:

Դուք պետք է տվյալ տնային տնտեսություն այցելեք **երեք անգամ**, նախքան վերջնական ՉՊԱՏԱՄԽԱՆՈՂ գրանցելը: Յուրաքանչյուր Ձեր այցելություն տնային տնտեսություն պետք է նշվի հարցաթերթի տիտղոսաթերթում՝ V7, V8 և V9, ինչպես նաև NR1, NR2 և NR3 փոփոխականներում (կախված տվյալ տնտեսություն կատարած Ձեր այցելությունների քանակից):

Եթե Ձեր առաջին այցելության ժամանակ դուրը փակ է եղել, Ձեր կրկնակի այցը այդ տնային տնտեսություն պետք է կատարվի ուրիշ օր և ուրիշ ժամի (նախընտրելի է ոչ աշխատանքային ժամի): ԳՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՂԵՔ ՁԵՐ ՀԵՌՆՈՒՄՆԱԿԱՎԱՐՈՎ ԵՒ ԽՆԴՐԵՔ ՋԱՆԳԱՀԱՐԵԼ ՁԵՁ: Եթե հնարավորություն կա, հարցրեք հարևաններին՝ երբ հնարավոր կլինի ընտանիքի անդամներին տանը գտնել: Եթե Ձեր երկրորդ այցելության ժամանակ դուրը դարձյալ փակ է, տվյալ տնային տնտեսություն այցելեք 3-4 օր հետո, նախընտրելի է ոչ աշխատանքային ժամերի:

Եթե Ձեր առաջին այցելության ժամանակ դուրը փակ չի եղել, սակայն այն անդամը, որը կարող էր պատասխանել Ձեր հարցերին, տանը չէ (օրինակ տանը միայն անչափահասներ են), հարցրեք՝ երբ կվերադառնա (կվերադառնան) հարցազրույցն անցկացնելու համար: Եթե նրանք խորհուրդ կտան Ձեզ վերադառնալ նույն օրը, այդ դեպքում դա թույլատրելի է:

Եթե տնային տնտեսության հարցազրույցը վարելու ընթացքում, Դուք հասկանաք, որ Ձեր հարցվողն (որը նշել է, թե լավ տեղեկացված է տնային տնտեսության գործերի դրության մասին) իրականում լավ տեղեկացված չէ, զգուշորեն, բայց հաստատուն կերպով պնդեք, որպեսզի կանչեն տնային տնտեսության այն անդամին, որն առավել տեղեկացված է տնային տնտեսության գործերի դրության մասին, քան Ձեր ներկայիս հարցվողը:

Եթե հարցվողը (հարցվողները) կընդհատի (կընդհատեն) հարցազրույցը մինչև **A13** հարցը, և տնային տնտեսության մյուս անդամներից ոչ մեկը, ով քաջատեղյակ է տնային տնտեսության գործերի դրության մասին, չի համաձայնի այն շարունակել, Դուք պետք է նշեք ՉՊԱՏԱՄԽԱՆՈՂ տնային տնտեսության հարցազրույցի համար, ինչպես նաև ընդհատել անհատական հարցազրույցը, եթե այն արդեն սկսվել է:

3. Անհատական հարցազրույցի համար հարցվողի ընտրությունը.

Անհատական հարցազրույցի համար մենք ընտրում ենք այն հարցվողին, ում ծննդյան օրը վերջինն է եղել: Եթե այդ անդամը տանը չէ, կամ նա զբաղված է, հարցրեք՝ երբ տանը կլինի/երբ ժամանակ կունենա, և այդ տնային տնտեսություն այցելեք ևս մեկ անգամ: Սակայն, եթե Ձեզ հայտնի է, որ հարցվողն անհասանելի կլինի մեկ կամ ավելի շաբաթ (օրինակ ժամանակավորապես բացակայում է), մի սպասեք նրա վերադարձին մեկ շաբաթից ավել, հետևեք Անհատական հարցաթերթի տիտղոսաթերթի L2 հարցից հետո առկա հրահանգներին (L2 հարցից հետո երկրորդ հրահանգ), և փոխեք անհատական հարցազրույցի համար տնային տնտեսության անդամին: Դուք պետք է տնային տնտեսություն այցելեք և փորձեք հարցազրույցն անցկացնել ի սկզբանե անհատական հարցազրույցի համար ընտրված անդամի հետ **երկու անգամ**, նախքան տնային տնտեսության այդ անդամի համար ՉՊԱՏԱՄԽԱՆՈՂ նշելը: Ինչպես տնային տնտեսության հարցաթերթի դեպքում, այս դեպքում ևս տնային տնտեսություն կատարած յուրաքանչյուր Ձեր այցելություն պետք է նշվի Անհատական հարցաթերթի տիտղոսաթերթում՝ V14 և V15, ինչպես նաև NR6 և NR7 փոփոխականներում (կախված տվյալ տնային տնտեսություն կատարած այցերի քանակից):

Եթե, սակայն, հաջորդ այցի ժամանակ ամեն դեպքում չհաջողվի հարցազրույց վարել ընտանիքի այդ անդամի հետ, հետևեք Անհատական հարցաթերթի տիտղոսաթերթի L2 հարցից հետո առկա հրահանգներին (L2 հարցից հետո երկրորդ հրահանգ) և փոխարինեք անհատական հարցազրույցի համար տնային տնտեսության անդամին: Դուք պետք է այդպես վարվեք նաև այն դեպքում, երբ անհատական հարցազրույցի համար ի սկզբանե ընտրված անդամը կամ հենց սկզբից իրաժարվում է մասնակցել հարցմանը կամ անկարող է Ձեր հարցերին պատասխանել (օրինակ առողջական վիճակի պատճառով) կամ կընդհատի հարցազրույցը մինչև **J1** հարցը:

Եթե այդ (նոր) հարցվողը ևս անհասանելի է, նշեք վերջնական ՉՊԱՏԱՄԽԱՆՈՂ անհատական հարցազրույցի համար:

4. Տնային տնտեսության և անհատական հարցազրույցների զուգահեռ անցկացումը.

Դաշտային աշխատանքների անցկացման օպտիմալացման նպատակներով մենք թույլ ենք տալիս տնային տնտեսության և անհատական հարցազրույցների զուգահեռ անցկացման հնարավորությունն այն տնային

տնտեսություններում, որտեղ այդպիսի հնարավորություն գոյություն ունի (այսինքն այն տնային տնտեսություններում, որտեղ տնային տնտեսության անդամը, որի ծննդյան օրը վերջինն է եղել, չի մասնակցում տնային տնտեսության հարցաթերթի լրացմանը):

Այն բանից հետո, երբ կա տնային տնտեսության՝ հարցազրույցին մասնակցելու համաձայնությունը, և տնային տնտեսության հարցաթերթի հարցվողը (հարցվողները) պատրաստ է (են) սկսել պատասխանել հարցերին, տնային տնտեսության հարցազրույցն սկսելուց առաջ անհատական հարցազրույց անցկացնողը նրանց հարցնում է F1 հարցը (տե՛ս տնային տնտեսության հարցաթերթի տիտղոսաթերթը) և հետևեք հետագա հրահանգներին: Եթե երկու հարցազրույցների զուգահեռ անցկացումը տվյալ տնային տնտեսությունում հնարավոր է, այն կօգնի խնայել տնային տնտեսության անդամների ժամանակը և նվազեցնել ՉՊԱՏԱՄԽԱՆՈՂ հնարավորությունը: Դրա հետ մեկտեղ, ՄԻ ՍԿՍԵՔ անհատական հարցազրույցը մինչև կհամոզվեք, որ տնային տնտեսության անդամները պատրաստ են տնային տնտեսության հարցազրույցի համար (ինչպես արդեն նշվել է, անհատական հարցազրույցը կհամարվի խոտան, եթե այն անցկացվել է այն տնային տնտեսությունում, որտեղ տնային տնտեսության հարցազրույցը չի հաջողվել):

Հարցազրույցի երկու մասերի ավարտից անմիջապես հետո լրացրեք անհատական հարցաթերթի վերջին էջը՝ օգտագործելով տնային տնտեսության Աղյուսակ A1-ի ինֆորմացիան:

ՀՐԱՅԱԼՈՒՄԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընդհանուր նկատառումներ

Տվյալների նախաձեռնություն 2007 հարցաթերթը բաղկացած է երկու մասից՝ տնային տնտեսությունների հարցաթերթ և նույն տնային տնտեսության կողմից լրացվելիք անհատական հարցաթերթ: Այս մասերից յուրաքանչյուրը տպագրվել է առանձին գրքուկի տեսքով: Բացի այդ, յուրաքանչյուր հարցաթերթ ունի առանձին տիտղոսաթերթ, որտեղ գրանցվում է տվյալ տնային տնտեսության մասին տեղեկատվությունը: Տիտղոսաթերթերի մաս են կազմում նաև **տվյալների չստացման կամ մերժման ձևաթղթերը**:

Յուրաքանչյուր քլաստերում 50 ընտրված տնային տնտեսություն կա, սակայն տարբեր բնակավայրերում ակնկալվում են տվյալների տարբեր չափերի մերժումներ. այսպիսով, մենք չենք ակնկալում, որ բոլոր 50 հարցազրույցներն էլ կլրացվեն: Այսուհանդերձ, հարցազրուցավարները հարցազրույց անցկացնելու նպատակով պետք է այցելեն ընտրված բոլոր տնային տնտեսությունները. եթե որևիցե պատճառով դա անհնարին լինի, ապա, **պահանջված բոլոր այցելությունները կատարելուց հետո**, յուրաքանչյուր այն SS-ի համար, որտեղ անհնարին է եղել հարցազրույց անցկացնել, պետք է լրացնել մերժման ձևաթղթերը:

Յուրաքանչյուր քլաստերում պետք է աշխատի երկու հարցազրուցավար, ընդ որում նրանք պետք է միասին այցելեն ընտրված SS: Հնարավորության դեպքում հարցաթերթի երկու մասերը պետք է լրացնել միաժամանակ: Սակայն նման հնարավորության բացակայության դեպքում, հարցազրուցավարներից մեկը պետք է սպասի մինչև մյուսն ավարտի իր հարցազրույցը: Այն դեպքերում, երբ տնտեսությունում հարցազրույցի մի մասն արդեն ավարտված է, իսկ հարցազրուցավարները պետք է վերադառնան տվյալ տնտեսություն երկրորդ կամ երրորդ անգամ, ապա այդ լրացուցիչ այցելությունը կատարում է հարցազրուցավարներից միայն մեկը:

Հարցաթերթում հարցերի տեքստերը (այսինքն՝ այն տեքստը, որով դուք դիմում եք հարցվողին) տպագրված են ընդգծված (հաստ) փոքրատառերով: Դաշտային աշխատանքի ժամանակ ձեզանից պահանջվում է բոլոր հարցվողների համար ԿԱՐԴԱԼ բոլոր հարցերի տեքստերը՝ օգտագործելով **Ճիշտ նույն բառերը**, ինչ գրված է հարցաթերթում, ընդամենը, պարտադիր չէ դրանք անգիր անել, կարող եք հարցերն ընթերցել հարցաշարից: Երբ հարցերի տեքստում տեսնեք ընդգծված բառեր, բարձրաձայն կարդալիս տվյալ հարցը ընդգծված կարդացեք:

Չի թույլատրվում հարցաշարի մեջ եղած որևէ հարց կամ բառ բացատրել սեփական հայեցողությամբ, նույնիսկ երբ լիովին վստահ եք այդ հարցում: Եթե հարցվողը չի հասկանում հարցը, դանդաղորեն կրկնեք այն՝ օգտագործելով հարցաթերթի բառերը՝ առանց բացատրություններ տալու: Սա շատ կարևոր է արդյունքների համեմատելիությունն ապահովելու տեսակետից:

Մենք ոչ թե ստուգում կամ ինչ-որ իմաստով փորձում ենք գնահատել հարցվողներին, այլ մեր ուզածն ընդամենը նրանց կարծիքն իմանալն է. այնպես որ, խնդրում ենք, մի փորձեք որևէ կերպ օգնել նրանց, այլ պարզապես ամեն ինչ արեք, որպեսզի օգնեք իրենց՝ արտահայտել իրենց սեփական կարծիքները:

Հարցաթերթում մանրամասն հրահանգներ կան այն մասին, թե յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ձեզանից ինչ է ակնկալվում: Սույն հրահանգները տպագրվում են մեծատառերով և սկսվում են **[ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐ!]** բառով:

ԲԱՐՁՐԱԶՁԱՅՆ ՄԻ ԸՆԹԵՐՑԵՔ հրահանգները, պարզապես ուշի-ուշով հետևեք դրանց: Հրահանգներին չհետևելը կարող է հանգեցնել ձեր լրացրած հարցաթերթի խոտանմանը:

Հարցաթերթի մեջ հարցվողների պատասխանները ծածկագրելու համար օգտագործվում են կամ թվերը կամ լատինական այբուբենի տառերը: Մեծամասամբ թվերն են օգտագործվում, բայց մի քանի դեպքերում (երբ դրա անհրաժեշտությունը ծագում է տվյալների մուտքագրման պատճառով) թվերի փոխարեն օգտագործվում են լատինական տառերը: Տառերի հետ պետք է աշխատել ճիշտ նույն ձևով, ինչ՝ թվերի հետ, այսինքն՝ պարզապես շրջանակի մեջ առեք հարցվողի պատասխան(ներ)ին համապատասխանող ծածկագիրը (կամ ծածկագրերը՝ եթե կիրառելի են):

Հարցվողները չպետք է նայեն հարցաթերթին ոչ հարցազրույցից առաջ, ոչ դրա ընթացքում և ոչ էլ դրանից հետո: Նրանք պետք է լսեն ձեր ձևակերպած հարցերը և պատասխանեն դրանց: Հարցվողի խնդրանքի դեպքում դուք կարող եք կրկնել հարցը՝ օգտագործելով հարցաթերթում առկա ճիշտ նույն ձևակերպումները: ոչ մի դեպքում ձևակերպումների փոփոխություն չի թույլատրվում: Երբ ուզում ենք, որ հարցվողները տեսնեն կոնկրետ տարբերակները, ապա նրանք ենք տրամադրում մի ՔԱՐՏ և թույլ տալիս, որ պահեն իրենց մոտ՝ մինչև ընտրեն իրենց պատասխանը:

Կրկնում ենք, հարցվողը չի նայում հարցաթերթին – հարցվողին չի կարելի հնարավորություն տալ տեսնելու, թե ինչ է տպագրված հարցաթերթում: Որպեսզի համոզված լինենք, որ հարցվողը չի կարող նայել հարցաթերթին, հարցազրույցի ժամանակ այնպիսի դիրք ընդունեք, որ հարցվողի համար անհնարին լինի նայելը:

Երբ ասում ենք՝ «ՔԱՐՏ ՕԳՏԱԳՈՐԾԵՔ», ապա ակնկալվում է, որ դուք հարցվողին ցույց կտաք համապատասխան հարցի համարով քարտը: Բացի այդ, կարող եք կարդալ այդ քարտի վրա տպագրված տարբերակները՝ եթե հարցվողը խնդրի այդ մասին: Սակայն հիշեք, որ «Չգիտեմ» և «Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակները քարտում չկան, իսկ «Այլ» տարբերակը քարտում հայտնվում է բացառիկ դեպքերում (ՏՏ հարցաթերթի 2, 6, 10, 11, 18 և 19 քարտերը), և դուք երբեք այս տարբերակները չպետք է բարձրաձայն կարդաք, երբ դրանք ՉԿԱՆ քարտի վրա: Ոչ մի պարագայում չի կարելի որևէ բան փոխել կամ ավելացնել այն ամենին, ինչ տպագրված է քարտում: Սա խիստ կարևորվում է ՏՆ 2007-ի շրջանակում անցկացվող մի քանի հազար հարցազրույցների արդյունքների համեմատելիությունն ապահովելու տեսակետից:

ՔԱՐՏ օգտագործելու դեպքում հավաստիացեք, որ հարցվողները կարդան ՔԱՐՏՈՒՄ առկա բոլոր տարբերակները և միայն դրանից հետո պատասխանեն հարցին: Մի ընդունեք հարցվողի պատասխանը, մինչև չկարդաք ՔԱՐՏ-ում առկա բոլոր տարբերակները:

Խնդրում ենք հավաստիանալ, որ հարցվողները քարտերի վրա չգրեն կամ շրջանակներ չանեն, որովհետև քարտերը ենթակա են օգտագործման բոլոր հարցվողների կողմից, ում հետ հարցազրույց եք վարելու, և ամեն անգամ, երբ դուք հարցվողին քարտ եք տալիս, այն պետք է լինի մաքուր և առանց որևէ նշումների:

Երբ հրահանգում գրված է՝ «ԿԱՐԴԱԼ ԲԱՐՉՐԱՉԱՅՆ», ապա ձեզանից պահանջվում է բարձրաձայն կարդալ տրված տարբերակները, բացի «Այլ», «Չգիտեմ» և «Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակներից: Հարցվողի պատասխանն ընդունելուց առաջ անպայման կարդացեք բոլոր տարբերակները: Դեպքերի մեծ մասում, «ԿԱՐԴԱԼ ԲԱՐՉՐԱՉԱՅՆ» հրահանգի ժամանակ դուք կարող եք ընդունել միայն մեկ պատասխան: Սակայն անպայման հետևեք հարցաթերթում տպագրված հրահանգներին և յուրաքանչյուր հարցի առնչությամբ ընդունեք թույլատրելի քանակությամբ տարբերակներ: Այս հրահանգին չհետևելը կարող է հանգեցնել ձեր լրացրած հարցաթերթը չընդունելուն:

Հարցաթերթի երկու մասերում էլ «Չգիտեմ» տարբերակի համար օգտագործեք «98» ծածկագիրը, իսկ «Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակի համար՝ «99» ծածկագիրը, բացառությամբ այլ ծանուցում ստանալու դեպքերից: Այդ տարբերակները հայտնի չեն (և չպետք է հայտնի լինեն) հարցվողներին:

Եթե հարց է տրված կոնկրետ ԹՎԻ մասին (օրինակ, ընտանի թռչունների գլխաքանակը), ապա մեր փնտրածը կոնկրետ թիվ է, ոչ թե թվային միջակայք: Եթե ի պատասխան հնչում է թվերի միջակայք (օր.՝ 15-20 հավ), ապա հարցվողին խնդրեք տալ մեկ թիվ, նույնիսկ եթե դա մոտավոր թիվ է: Հարցաթերթում միջակայք նշել չի կարելի:

Երբ հարցաթերթում տպագրված տեսնեք [երկիրը] բառը, ապա անվանեք այն երկիրը, որտեղ դուք անցկանում եք հարցազրույցը՝ անկախ այն բանից, թե հարցաթերթն ինչ լեզվով է:

Հարցազրույցի առաջին (տնային տնտեսության) մասն անցկացնելիս, եթե հարցազրույց եք վարում տնտեսության ավելի քան մեկ անդամի հետ, ապա պատասխանը գրանցելուց առաջ խնդրում ենք անպայման հավաստիանալ, որ տնտեսության երկու անդամների միջև տարածայնություններ չկան: Տարածայնություններ լինելու դեպքում հարցվողներին ժամանակ տվեք միմյանց հետ պարզաբանելու պատասխանը և առաջարկել երկուսի համաձայնությամբ ի հայտ եկած լավագույն պատասխանը:

Խնդրում ենք հետներդ վերցնել հաշվիչ կամ պատրաստ լինել օգտագործելու ձեր բջջային հեռախոսի հաշվիչը:

Տնային տնտեսությունների հարցաթերթի տիտղոսաթերթ

Տիտղոսաթերթի 1-ին էջը

Հարցաթերթը դուք կստանաք ղեկավարից, և դրանում արդեն լրացված կլինի ղեկավարի կողմից լրացման ենթակա ամբողջ տեղեկատվությունը: Խնդրում ենք անպայման լրացնել հարցազրուցավարի կողմից լրացման ենթակա տեղերը:

Զեզանից պահանջվում է լրացնել կատարված **բոլոր փորձերի** ամսաթիվն ու ժամը՝ անկախ այն բանից՝ հարցազրույցը տեղի է ունեցել, թե ոչ:

Եթե **SS** կատարած առաջին այցելությունից հետո գրացվել է տվյալների չստացում, ապա պատասխանեք **միայն** տվյալների չստացման թերթիկի NR1 հարցին և հետևեք այդ թերթիկի հետագա հրահանգներին:

Տիտղոսաթերթի 2-րդ էջը

Տնային տնտեսության անդամին դիմելու ժամանակ ակնկալվում է, որ դուք այս տեքստը կմտապահեք ձեր աշխատած երկրի անվանական լեզվով:

Հարց F1

Եթե **SS** հարցազրույցին մասնակցող հարցվող(ներ)ը նույն ածը (անձինք) չէ (չեն), ինչ անհատական հարցազրույցի հարցվող(ներ)ը և նրանք երկուսն էլ տամն են, ապա դուք կկարողանաք անցկացնել միաժամանակ երկու հարցազրույց: Սակայն երկու հարցազրույցներն անպայման անցկացրեք տարբեր սենյակներում: Եթե դա հնարավոր չէ, ապա նախ անցկացրեք տնտեսության հարցազրույցը և սպասեք դրա ավարտին՝ նախքան անհատական հարցազրույցը սկսելը:

Ակնկալվում է, որ երկու հարցազրույցներ միաժամանակ կարելի է սովորաբար անցկացնել գյուղական բնակավայրերում և փոքր քաղաքներում: Սակայն մայրաքաղաքներում և մեծ քաղաքներում դա մեծամասամբ կարող է հնարավոր չլինել: Անհրաժեշտության դեպքում, առաջին այցելության ժամանակ անպայման նշանակեք անհատական հարցազրույցի կամ երկու հարցազրույցների ամսաթիվն ու ժամը:

Հարց L1

Ղեկավարը ձեզ վաղօրոք կտեղեկացնի, թե որ լեզուներն են կիրառելի ձեզ հատկացված քլաստերում. այնպես որ, այս հարցը տալու ժամանակ հարցրեք **միայն** ձեզ բաժին ընկած քլաստերում կիրառելի լեզուների մասին: Այս երկրի պետական լեզուն՝ հայերենը, ինչպես նաև ռուսերենն առկա են բոլոր քլաստերներում:

Եթե տնտեսության անդամ(ներ)ը չի (չեն) ընտրում առաջարկվող լեզուներից որևէ մեկը, ապա փորձեք որոշել իրենց նախընտրած լեզուն՝ դրա համար հատկացված տեղում («Այլ լեզուներ»): Եթե տնտեսության անդամ(ներ)ը ընտրում է (են), որն արդեն ցանկում կա, բայց կիրառելի չէ ձեր քլաստերում, ՇՐՋԱՆԱԿԻ ՄԵՋ ՄԻ ԱՌԵՔ համապատասխան ծածկագիրը, փոխարենը՝ սահմանված տեղում գրեք լեզուն («այլ լեզու»):

Եթե տնտեսության անդամ(ներ)ը պատասխանում է (են) «Զգիտեմ», այնուամենայնիվ նրանց հարցրեք, թե արդյոք չէ՞ն կարող հարցազրույցին մասնակցել մեր պետական լեզվով՝ հայերենով, այնուհետև՝ ռուսերենով: Եթե այս լեզուներից ոչ մեկը չնախընտրեն, ապա «Այլ լեզուներ» տեղում գրեք որևէ այլ լեզու, որով, իրենց ասելով, իրենք կարող են հարցազրույց տալ:

Եթե տնտեսության անդամ(ներ)ը ձեզ ասում է (են), որ միևնույն է, թե որ լեզվով կանցկացվի հարցազրույցը և որ իրենք կարող են այն անցկացնել տվյալ քլաստերում կիրառելի բոլոր լեզուներով, ապա օգտագործեք հայերենով հարցաթերթը:

Տվյալների չստացման թերթիկը

Այս թերթիկը լրացրեք պատասխան չստանալու դեպքում: Նման դեպքում առհասարակ մի էլ սկսեք լրացնել հարցաթերթը, այլ, հետևելով ընտրահարցման հրահանգներին՝ անցեք հաջորդ տնտեսությանը:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Տնային տնտեսության տիտղոսաթերթից անպայման արտագրեք **երկրի ծածկագիրը** և **տնային տնտեսության նույնացման համարը**: Սա ձեր պարտականությունն է և ՈՉ ԹԵ՝ ղեկավարի:

Հարցազրույցի առաջին մասի (Տնային տնտեսության հարցաթերթի) համար հարցվող(ներ)ին ընտրելուց հետո, խնդրում ենք անպայման տեղավորվեք բավականաչափ հանգիստ և հարմարավետ սենյակում: Խնդրում ենք այնպես անել, որ տնային տնտեսության հարցաթերթի լրացման ժամանակ ներկա լինեն միայն տվյալ տնտեսության հարցազրույցին մասնակցող անդամները (ոչ ավելի քան 2 անդամ): Այն բանից հետո, երբ բոլորը նստած են, նրանց համար հարմարավետ պայմաններ են ապահովված և հարցազրույցի լեզուն որոշված ու

նշված է տիտղոսաթերթի L1 հարցի տակ, սկսեք հարցազրույցը: Հատկացված տեղում (Տնային տնտեսությունների հարցաթերթի հարց T2) գրանցեք հարցազրույցի ամսաթիվը (հարց T1) և դրա սկսելու ժամը:

Բաժին Ա. Տնային տնտեսության ընդհանուր բնութագիրը

Տնային տնտեսության սահմանումը: Խնդրում ենք ուշադիր կարդալ այս բաժնի սկզբում տրված տնային տնտեսության սահմանումը և կիրառել այն ամբողջ հարցազրույցի ընթացքում: Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ ներկա միգրանտները (տնային տնտեսության նախկին անդամները, ովքեր այլևս չեն ապրում տնտեսությունում) հաշվի կառնվեն հետագայում: Եթե նրանք ներկա պահին չեն ապրում տնտեսության մնացած անդամների հետ միասին, ապա հարցազրույցի սկզբում նրանց մասին չենք խոսում՝ մինչև A25 հարցը: Այստեղ մեզ հետաքրքրում են միայն այն մարդիկ, ովքեր հարցազրույցի ժամանակ ֆիզիկապես ներկա են տնային տնտեսությունում կամ բացակայել են 3 ամսից ավելի քիչ:

Կարող են լինել դեպքեր, երբ ձեր անցկացրած հարցազրույցին մասնակցող տնային տնտեսությունը տնտեսապես սերտորեն կապված է մեկ այլ տնտեսության հետ, բայց այդ տնտեսությունները միասին չեն ապրում (առավել «դասական» օրինակը գյուղական շրջաններում ապրող իրենց ծնողներից աջակցություն ստացող, մեծ քաղաքներում ապրող ուսանողներն են): Սույն հարցման շրջանակում սրանք երկու տարբեր տնտեսություններ են, կամ հիմնական կամ ժամանակավոր, քանզի ներկայումս նրանք միասին չեն ապրում: Նման տնային տնտեսության անդամների մասին ինֆորմացիան ավելի ուշ մուտքագրեք A2 աղյուսակում:

Հարց A3.

Եթե ռեսպոնդենտը կամ տնային տնտեսության անդամը ծնվել է երկրի այնպիսի տարածաշրջանում, որտեղ գոյություն ունի հակամարտություն, համապատասխան կողմ ընտրելուց հաշվի առեք բաժանումն ըստ երկրի ըստ միջազգային իրավունքի:

Հարցեր A4a-A23.

Այս հարցերի պատասխանները գրանցվում են **Աղյուսակ A1**-ում (եջ 5), համապատասխան սյունակում: Այս աղյուսակը պետք է լրացնել **շարք առ շարք: Տվյալ տնտեսությունում ներկա պահին չբնակվող, ավելի քան 3 ամիս տնտեսությունից դուրս գտնվող անդամը չի կարող գրանցվել այս աղյուսակում:**

Հարցվողները ինքներն են սահմանում, թե ով է ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ, թեև գլխավոր չափանիշը կարելի է համարել տնտեսության հիմնական կերակրողը լինելու փաստը: Սակայն սա պարտադիր անհրաժեշտություն չէ: Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ համաձայն սույն հարցման մեջ կիրառվող (և հարցվողներին բացատրվող)՝ տնային տնտեսության ղեկավարի վերաբերյալ սահմանման, այդ անձը պետք է ներկայումս ապրելիս լինի տվյալ տնտեսությունում. եթե կա մեկը, ում հարցվող(ներ)ը համարում է (են) տնտեսության ղեկավար, բայց այդ անձը ներկայումս չի բնակվում տնտեսությունում (ավելի քան 3 ամիս եղել է տնտեսությունից դուրս), ապա այդ անձը ՉԻ ԿԱՐՈՂ ԳՐԱՆԳՎԵԼ իբրև տնտեսության ղեկավար: Հարցվող(ներ)ին ասացեք, որ իրենց հնարավորություն կտրվի այդ անձի մասին խոսել ավելի ուշ և խնդրեք նրանց տնտեսության ղեկավարին ընտրել տվյալ պահին տնտեսությունում ապրող անձանցից:

Այս հարցերը (A4a –ից A23-ը) տալու ժամանակ, տնտեսության այն անդամը, ում մասին խոսում եք, կլինի հարցվողը: Այս դեպքում «տնտեսության այս անդամը» արտահայտության փոխարեն պատրաստ եղեք օգտագործել «դուք» ձևակերպումը՝ A4a-ից մինչև A23 հարցերում: Հարցերի ձևակերպումների մեջ որևէ այլ փոփոխություն ՄԻ կատարեք: Ուշադիր կերպով հետևեք հրահանգներին, անպայման հարցերը տվեք ճիշտ հերթականությամբ և **Աղյուսակ A1**-ը լրացրեք շարք առ շարք: Սյունակից սյունակ մի թեք՝ նույնիսկ եթե հարցվողը այլ հերթականությամբ պատասխաններ է տալիս: Փոխարենը նրանց խնդրեք պատասխանել ձեր տված հարցերի հերթականությամբ. բացատրեք, որ ձեզ համար շատ կարևոր է հրահանգներին հետևելը:

Հարցեր A4a և A4b

Եթե ձեր հարցազրույցին մասնակցող տնտեսությունը բաղկացած է մեկ անձից, ապա տվեք միայն A4a հարցը: Եթե տնտեսությունը բաղկացած է ավելի քան մեկ անձից, ապա պետք է նախ տաք A4a հարցը, այն էլ՝ ամբողջ հարցազրույցի ընթացքում միայն մեկ անգամ, իսկ տնտեսության մնացած անդամների մասին հարցնելիս անհրաժեշտ կլինի տալ A4b հարցը այնքան անգամ, որքան անդամ ունի տվյալ տնտեսությունը, բացի տնտեսության ղեկավարից:

Տնտեսության ղեկավարը նախապես ծածկագրված է հարցաթերթի **A1 Աղյուսակում**, այնպես որ տնտեսության ղեկավարի դեպքում դուք պետք է բաց թողնեք A5 հարցը, սակայն այս հարցը անհրաժեշտ կլինի տալ տնտեսության բոլոր մյուս անդամների առումով: Բոլոր համապատասխան բացթողումների մասին մանրամասները տրված են հարցաթերթի հրահանգներում:

ՔԱՐՏ 2

Այս քարտում «1» ծածկագիր չկա, որովհետև, ինչպես վերը նշել ենք, տնտեսության ղեկավարը նախապես ծածկագրված է հարցաթերթի **Աղյուսակ A1**-ում: Քարտը սկսվում է «2» ծածկագրով, այնպես որ սա սխալ ՉՀԱՍՍԱՐԵՔ:

Ֆաթեց A7

Այս հարցի համար մենք ունենք մի քարտ (ՔԱՐՏ 3-ը), սակայն այդ քարտը պետք է օգտագործել միայն այն բանից հետո, երբ դուք բացարձակապես համոզված լինեք, որ հարցվող(ներ)ը չի (չեն) կարող հիշել տնտեսության որևէ անդամի ծննդյան թիվը: Անպայման փորձել ի հայտ բերել ծննդյան թիվը և միայն դրանից հետո օգտագործեք այս ՔԱՐՏԸ: Նույն պահանջները վերաբերում են **A28 հարցին**:

Ֆաթեց A9

Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ համապատասխան քարտի (ՔԱՐՏ 4) վրա նշված «ամուսնացած են» արտահայտության համար մենք օգտագործում ենք մի քանի կատեգորիաներ և կուդեմայինք, որ հարցվողները պատմեն, թե իրենք կամ իրենց տնտեսության անդամները կոնկրետ ինչպես են ամուսնացել, այսինքն՝ մի ընդունեք «ամուսնացած են» պատասխանը, այլ փոխարենը խնդրեք ընտրել «ամուսնացած են» արտահայտությանը վերաբերող «2», «3» կամ «4» տարբերակներից որևիցե մեկը:

Տարբերակ «7»-ը («առանձին ենք») նշանակում է, որ զույգը ամուսնացած է եղել ավելի վաղ (կամ քաղաքացիական ամուսնությանը կամ եկեղեցական ծիսակարգով), բայց որոշել են առանձնանալ, այսինքն՝ այլևս միասին չապրել: առանձնանալը դեռևս ամուսնալուծություն չէ, և նրանք կարող են նորից միանալ, սակայն այս պահին նրանք *դե-ֆակտո* ամուսնացած չեն (թեև կարող են դեռևս օրինական ամուսնության մեջ գտնվել) և չեն կազմում մեկ տնտեսություն և չեն բաժանում եկամուտներն ու ծախսերը: Խնդրում ենք հաշվի առնել, որ ամուսնական զույգը կարող է ապրել առանձին (օր.՝ ամուսիններից մեկը միգրանտ է), բայց քանի դեռ նրանք իրենց համարում են ամուսնացած և բաժանում են եկամուտներն ու (կամ) ծախսերը, ապա նրանք համարվում են ամուսնացած:

Ֆաթեց A10

«Բարձրագույն կրթություն» (տարբերակներ «6» և «7») ասելով հասկանում ենք միջնակարգ դպրոցից հետո ստացած բուհական որևէ կրթություն՝ լինի դա մասնագետի, բակալավրի, թե մագիստրոսի որակավորմամբ: Սակայն սա տարբերվում է «հետբուհական աստիճանից», որը համարժեք է թե «*գիտությունների թեկնածուի*» և թե «*գիտությունների դոկտորի*» աստիճանների:

Ֆաթեց A11

«Զբաղված են» ասելով հասկանում ենք ոչ միայն որևէ գործատուի հետ գրավոր պայմանագրի վրա հիմնված պաշտոնական զբաղվածությունը, այլև տնային տնտեսության անդամի կողմից կատարվող որևէ տեսակի աշխատանք, այդ թվում՝ ոչ պաշտոնական պայմանավորվածությունները, որոնց համար նրան վճարում են: Այս ենթատեքստում ինքնազբաղվածությունը նույնպես համարվում է զբաղվածության ձև, որովհետև ինքնազբաղ մարդը նույնպես աշխատում և եկամուտ է ստանում: Այսպես, օրինակ, զարդեղենի առևտրականները, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղներն ու եկամուտ ստացողները համարվում են զբաղված:

Ֆաթեց A12

Այստեղ ծածկագիր է անհրաժեշտ տնտեսության բոլոր անդամների համար: Ինչպես հրահանգված է հարցաթերթում, հարցվող(ներ)ի համար օգտագործեք «1» ծածկագիրը, իսկ տնտեսության մյուս բոլոր անդամների համար անպայման օգտագործեք «0» ծածկագիրը:

Ֆաթեց A13

Մեզ հետաքրքրում է, թե տնային տնտեսության որ անդամն ում հետ է ամուսնացած: Հետևյալ օրինակից պարզ է դառնում, թե ինչպես պետք է լրացնել համապատասխան սյունակը:

Պատկերացրեք, որ **A13 հարցը** տալու պահին ձեր ձեռքի տակ է տնային տնտեսության հետևյալ անդամների ցուցակը.

Համարը	Անունը	Տնտեսության ղեկավարի նկատմամբ հարաբերակցությունը	Սեռը	...	Ամուսնական կարգավիճակը	...	Ամուսինը
AN1	A4	A5	A6		A9		A13
1	Դավիթ	1	1		2		2
2	Իմնա	2	2		2		1
3	Միքայել	3	1		4		5
4	Ռոման	3	1		3		21
5	Բելլա	6	2		4		3
6	Նիկ	8	1		1		

Այս աղյուսակից իմանում ենք, որ Դավիթը և Իննան ամուսիններ են, Միքայելն ու Ռոմանը՝ նրանց որդիներն են, Բելլան հարսն է, իսկ Նիկը՝ թոռը: Բացի այդ, հնարավոր է, որ մենք իմանանք, որ թե Միքայելը և թե Ռոմանն իրենց որդիներն են, երկուսն էլ ամուսնացած են, բայց միայն մեկ հարսի անուն է գրանցված այս տնտեսությունում (երկրորդը կարող է, օրինակ, արտագաղթած լինել): Այսպիսով, մենք չգիտենք, թե Բելլան եղբայրներից որ մեկի հետ է ամուսնացած: (Եվ տարբեր տնտեսություններում մեզ կարող են հանդիպել բազմաթիվ համանման տարբերազատումներ:)

Այս առումով մեզ օգնում է A13 սյունակը: Այստեղ մենք գրանցում ենք տվյալ շարքում գրանցված անձի ամուսնու համարը (AN1 սյունակից): Քանի որ Դավթի կինը Իննան է, ապա մենք AN1 սյունակում տեսնում ենք, որ Իննայի համարը «2»-ն է և այս համարը գրում ենք A13 սյունակի այն շարքում, որտեղ Դավիթն է գրանցված: Այնուհետև AN1 սյունակում գտնում ենք, որ Դավթի համարը «1»-ն է և այս համարը գրում ենք A13 սյունակի այն շարքում, որտեղ Իննան է գրանցված (տես ներքոնշյալ օրինակը):

Այնուհետև մենք գտնում ենք, որ Միքայելն ամուսնացած է Բելլայի հետ, ուրեմն AN1 սյունակում տեսնում ենք, որ Բելլայի համարը «5»-ն է, այս համարը գրում ենք A13 սյունակի այն շարքում, որտեղ գրանցված է Միքայելը: Այնուհետև AN1 սյունակում տեսնում ենք, որ Միքայելի համարը «3»-ն է և այս համարը գրում ենք A13 սյունակի այն շարքում, որտեղ Բելլան է գրանցված: Վերջապես, տեսնում ենք, որ Ռոմանի կինը ներկայումս չի բնակվում տվյալ տնտեսությունում, ուրեմն գրում ենք «21» ծածկագիրը A13 սյունակի այն շարքում, որտեղ գրանցված է Ռոմանը:

Ինչ վերաբերում է 6-րդ շարքին, որտեղ գրանցված է Նիկը, գիտենք, որ նա ամուսնացած չէ և նրա համար A13 սյունակում ՈՉ ՄԻ ԾԱԾԿԱԳԻՐ չպետք է լինի:

Համարը	Անունը	Տնտեսության ղեկավարի նկատմամբ հարաբերակցությունը	Սեռը	...	Ամուսնական կարգավիճակը	...	Ամուսինը
AN1	A4	A5	A6		A9		A13
1	Դավիթ	1	1		2		2
2	Իննա	2	2		2		1
3	Միքայել	3	1		4		5
4	Ռոման	3	1		3		21
5	Բելլա	6	2		4		3
6	Նիկ	8	1		1		

Հարց A 14a

Ուշադիր եղեք, որ եթե օրինակ և՛ այն ուսանողները, որոնք այլ քաղաքում են ստանում իրենց ուսումը և հետևապես մի քանի ակադեմիական տարի անց են կացնում իրենց տնային տնտեսությունից հեռու, նույնիսկ եթե պարբերաբար այցելում են իրենց ընտանիքը, և՛ զինծառայության գտնվող անձինք, պետք է հաշվի առնվեն որպես այդ տնային տնտեսության անդամ:

Սյունակ A15, Աղյուսակ A1

1999թ.-ից 3 ամսից ավելի ժամկետով տնտեսությունից հեռացած, այնուհետև վերադարձած անդամների համար գրեք «1» ծածկագիրը: Որևէ ծածկագիր ՄԻ գրեք տնտեսության այն անդամների համար, ովքեր 3 ամսից ավելի ժամկետով չեն հեռացել տնտեսությունից՝ սկսած 1991թ.:

Հարց A18

Այս հարցը վերաբերում է վերադարձած միգրանտի բնակության վերջին տարածաշրջանին: Եթե միգրանտը միգրացիայի ընթացքում մի քանի վայրեր է փոխել, ապա մեզ հետաքրքրում է նրա բնակության վերջին վայրը, որտեղ ապրել է ավելի քան 3 ամիս:

Հարց A 20

Նկատեք, որ զինծառայության գտնվող անձինք չպետք է հաշվի առնվեն որպես աշխատող այս հարցի շրջանակներում:

Հարցեր A26-A37

Այս հարցերի պատասխանները գրանցված են Աղյուսակ A2-ում (էջ 11) համապատասխան սյունակների տակ: Այս աղյուսակը պետք է լրացնել **շարք առ շարք**: Ինչպես և **աղյուսակ A1**-ի դեպքում, ուշադիր հետևեք հրահանգներին և աղյուսակը լրացրեք **շարք առ շարք**՝ հարցերը տալով ճիշտ հերթականությամբ: Խնդրում ենք հաշվի առնել, որ այս հարցերը վերաբերում են տնտեսության տվյալ անդամների **վերջին** անգամ մեկնելուն և նրանց **ներկա** կացությանը: Մենք չենք հարցնում նրանց նախորդ տեղաշարժերի և առհասարակ նրանց նախորդ պատմության մասին:

Քարտ A26

Այս քարտին պատասխանելիս, ի նկատի պետք է ունենալ, որ տնտեսության ղեկավարը նույն մարդն է, ինչ՝ A5 քարտի դեպքում:

Քարտ A28

Այս քարտի համար մենք ունենք ՔԱՐՏ (ՔԱՐՏ 3-ը), բայց այդ քարտը պետք է օգտագործել միայն այն բանից հետո, երբ դուք բացարձակապես համոզվեք, որ հարցվող(ներ)ը չի (չեն) կարող հիշել տնտեսության որևէ անդամի ծննդյան թիվը: Անպայման փորձեք ի հայտ բերել ծննդյան թիվը և միայն դրանից հետո օգտագործեք այս ՔԱՐՏԸ:

Քարտեր A38-A40

Այս քարտերը բոլորին չեն վերաբերում: Դրանք տրվում են միայն այն տնային տնտեսություններին, որոնք ունեն ներկայումս արտերկրում ապրող անդամներ. հարցերը որևիցե տեսակի փոխանցումների մասին, որ տնտեսությունը ստացել է, լինի դրամական, թե ոչ դրամական: A39 և A40 քարտերում, «այլ տնտեսություններ» արտահայտությունը նշանակում է ոչ միայն արյունակից հարազատների տնտեսություններ, այլ նաև ընկերների, հարևանների և այլ տնտեսություններ: Այն դեպքերում, երբ նվիրատվությունները հատկացվել են այդ այլ տնտեսություններին, և ստացողի որոշումը չէ դրանք բաժանել, հարցի պատասխանը պետք է լինի «ոչ»: «Այո» պատասխանը պետք է ընդունվի միայն այն դեպքում, երբ ընդոնողն է (հարցվող տնտեսությունը) որոշում նրանց հետ բաժանել դրանք:

Բաժին 9. Տնտեսական պայմանները և վարքագիծը

Երբ ձեզանից պահանջվում է անցել հարց C1-ին, ապա անպայման հարցվող(ներ)ի համար կարդացեք այդ հարցից առաջ տպագրված տեքստը:

Աղյուսակ C1b, Քարտ C1

Առարկաների մասին հարցերը տող առ տող և աղյուսակը լրացրեք **շարք առ շարք**. յուրաքանչյուր առարկայի կապակցությամբ գրեք համապատասխան ծածկագիրը և տնտեսության սեփականությունը հանդիսացող բոլոր առարկաների կապակցությամբ գրեք այդ առարկաներից ամենանորի ձեռքբերման տարին:

Սակայն եզ հետաքրքրում են միայն այն առարկաները, որոնք նորմալ աշխատանքային վիճակում են և օգտագործվում են տնտեսությունում, այնպես որ, եթե տնտեսությունն ունի, օրինակ, չաշխատող սառնարան, ապա այն նշվում է որպես ծածկագիր «2» («Ոչ»), և այլևս չենք հարցնում դրա ձեռքբերման տարեթիվ մասին:

Աղյուսակ C1b-ն լրացնելիս խնդրում ենք հաշվի առնել, որ նշանակություն չունի, թե ձեռք բերված առարկան արդյոք օգտագործված է, թե նոր, արդյոք այն ձեռք է բերվել կանխիկ դրամով, թե վարկով կամ թե արդյոք վարկն անբողջությամբ փակված է, թե ոչ: Մեզ հետաքրքրողն այն է, թե արդյոք տվյալ առարկան տնտեսության սեփականությունն է, թե ոչ, և եթե այո, ապա՝ երբևից:

Սակայն որոշ դեպքերում կարող է այնպես լինել, որ տնտեսությունը ոչ թե գնել, այլ նվեր է ստացել ինչ-որ բան կամ այն ձեռք է բերել փոխանակման միջոցով: Նման դեպքերում օգտագործեք «9997» ծածկագիրը:

Քարտեր C3-C5

C3-C5 քարտերը վերաբերում են տնտեսության սեփականությունը հանդիսացող ուղևորատար ավտոմեքենաներին և միկրոավտոբուսներին: Բեռնատարների և ոչ-ուղևորատար այլ տրանսպորտային միջոցների մասին տալիս ենք C6 քարտը: Նշանակություն չունի՝ արդյոք այդ տրանսպորտային միջոցները ձեռք են բերվել վարկով կամ արդյոք վարկը լիովին մարվել է, թե ոչ:

C5 քարտի դեպքում, եթե հարցվողը նշում է ավտոմեքենայի մակնիշը, բայց համոզված չէ, թե որտեղ է այն արտադրվել, ապա շրջանակի մեջ առեք «98» ծածկագիրը («Չգիտեմ»): Խնդրում ենք հաշվի առնել, որ այս դեպքում մեզ չի հետաքրքրում, թե որ երկրում է ավտոմեքենան գնվել: Օրինակ, Ֆոլկսվագենը կարող է գնված լինել ԱՄՆ-ում, բայց դա չի նշանակում, թե այն հյուսիսամերիկյան ավտոմեքենա է:

Քարտ C6

«Տրակտոր» հասկացության տակ հասկանում ենք միայն վարման ենթակա 3, 4 կամ 6 անիվ ունեցող մեքենաները:

Քարտ C7

«Ընթացիկ հաշիվ» ասելով հասկանում ենք այն, ինչպես որ կար նախկին Խորհրդային Միությունում որպես «ընթացիկ հաշիվ»:

«Խնայողական հաշիվ» ասելով հասկանում ենք այն, ինչ նախկին Խորհրդային Միությունում հայտնի էր որպես «ավանդային հաշիվ»:

Ֆարցեր C9-C11

Խնդրում ենք հաշվի առնել, որ C9-C11 հարցերը վերաբերում են տեղական իշխանությունների կողմից տրամադրվող հանրային ծառայություններին: Այս հարցերը չեն վերաբերում այն մասնավոր համակարգերին, որ մարդիկ կարող են անցկացրած լինել իրենց տներում, սեփական ծախսերով: Ասելով « ծառայություններ, որոնք ստանում է ձեր տնային տնտեսությունը » ի նկատի ունենք այն, թե արդյոք տնտեսությունը տեխնիկապես միացված է այդ ծառայությանը՝ անկախ այն հանգամանքից, թե տնտեսությունն օգտագործում է տվյալ ծառայությունը, թե ոչ:

Աղյուսակ C9-ը անհրաժեշտ է լրացնել **սյունակ առ սյունակ**:

«Պարտք եղե՞լ է» արտահայտությունը մատնանշում է վճարման վերջնաժամկետն անցնելուց ՅԵՏՈ դեռևս պարտք ունենալը: Եթե տնտեսությունը պարտավոր է վճարել, օրինակ, անցյալ ամսվա ջրի վարձը, բայց 5 օր դեռ ունի վճարումը կատարելու համար, ապա դա չի համարվում պարտք լինել:

Ֆարց C13

«Կլիմայի կառավարման համակարգեր» ասելով (տարբերակ «A»), հասկանում ենք պատին մոնտաժված ջեռուցման և/կամ հովացման սարքերը: «Գազօջախ» ասելով (տարբերակ “D”) հասկանում ենք և՛ արդյունաբերական արտադրության գազային վառարանները, և՛ խոհանոցային գազօջախները: Գազային տաքացուցիչներ ասելով (տարբերակ «E») հասկանում ենք արդյունաբերական արտադրության գազային տաքացուցիչները (օր.՝ «Արիստոն»): Այս հարցում նշեք/ավելացրեք «I» տարբերակը «այլ» տարբերակների համար. այն պարզապես վրիպել է հարցաթերթում:

Ֆարց C14

Ասելով «սեփականատեր» (տարբերակ «5»), հասկանում ենք, որ սա չի կարող լինել տնային տնտեսության անդամ: Հնարավոր են դեպքեր, երբ բնակարանը պատկանում է պետությանը, դեռևս սեփականաշնորհված չէ: Այդ դեպքում եթե հարցվողը ընդունում է այդ բնակարանը իրենը, պատասխանը պետք է լինի “սեփական” (կողավորեք 1): Այն դեպքում, երբ հարցվողը պատասխանում է, որ բնակարանը դեռ պետական սեփականություն է, “չգիտեմ” պատասխանը (կող 98) պետք է գրանցվի:

Ֆարց C15

Այս հարցը վերաբերում է զուտ այսպես ասած «բնակտարածությանը». այս պարագայում հաշվի չեն առնվում խոհանոց(ներ)ը, սանհանգույց(ներ)ը , ավտոտնակները և այլն:

Ֆարց C16

«Ամառանոց» կամ «հանգստյան տուն» ասելով հասկանում ենք ամառային տուն, որը տվյալ տնտեսությունն օգտագործում է միայն արձակուրդներն անցկացնելու նպատակով:

Ֆարց C18

«Վարձակալություն» (տարբերակներ «1» և «3») նշանակում է, որ տնտեսությունը հողամասն օգտագործելու համար դրան է վճարում:

Ֆարց C20

Կուզենայինք հիշեցնել, որ մեկ հեկտարը հավասար է 10 հազար քառակուսի մետրի: Եթե տնտեսության սեփականություն հանդիսացող հողը մեկ հեկտարից պակաս է, ապա ստորակետից առաջ գրեք «0», իսկ ստորակետից հետո գրեք տնտեսության ունեցած հողի չափին համապատասխանող թիվը:

Օրինակ, եթե տնտեսությունն ունի 1500 քառ. մ հող, ապա այն գրանցեք որպես 0,15 հեկտար. եթե տնտեսությունն ունի 500 քառ.մ, ապա գրանցեք որպես 0,05 հեկտար:

Ֆարց C22

Այս հարցով մենք փորձում ենք ճշտել, թե որքանով են տնտեսությունները սեփական կարիքները հոգալու հարցում հույսը դնում իրենց վրա, երբ խոսքը վերաբերում է գյուղատնտեսական մթերքներին: Սննդամթերքի յուրաքանչյուր տեսակի առումով, մեկը մյուսից անկախ, պետք է գրանցել տոկոսային հարաբերությունը: Այսպիսով, ընդհանուր տոկոսային հարաբերության սյունակում անպայման չէ, որ տոկոսների հանրագումարը կազմի 100%:

Ֆարցեր C23-C25, Աղյուսակ C23

Աղյուսակը պետք է լրացնել սյունակ առ սյունակ: Եթե տնտեսությունն ունի աղյուսակում թվարկվածներից որոշ կենդանիներ, ապա տվեք ունեցած կենդանատեսակ(ներ)ի վերաբերյալ բոլոր երեք հարցերը և պատասխանները գրանցեք աղյուսակի համապատասխան շարքերում և սյունակներում: Եթե տնտեսությունը աղյուսակում թվարկված կենդանատեսակներից որևէ մեկը չունի, աղյուսակի C23 սյունակում գրեք «0»՝ այն շարքում, որտեղ նշված է տվյալ տեսակի կենդանին և դատարկ թողեք C24 և C25 սյունակների համապատասխան վանդակները:

Համապատասխան աղյուսակի վերջին շարքում պետք է գրանցել տնտեսության ունեցած բոլոր տեսակների ընտանի թռչունները (հավեր, հնդկահավեր և այլն):

Հարց C26

Այստեղ նույնպես, ինչպես և C22 հարցի դեպքում էր, պետք է գրանցել սննդամթերքի յուրաքանչյուր տեսակի տոկոսային հարաբերությունը՝ մեկը մյուսից անկախ: Այսպիսով, ընդհանուր տոկոսային հարաբերության սյունակում անպայման չէ, որ տոկոսների հանրագումարը կազմի 100%:

Հարց C28

Այս հարցը հիմնվում է միայն տնտեսության ընկալման վրա: Նշանակություն չունի՝ արդյոք տնտեսությունն ամեն օր միս է սպառում կամ թե արդյոք տնտեսության անդամների կարծիքով իրենք բավականաչափ միս չեն օգտագործում և ստիպված են սահմանափակել սպառումը: ամեն դեպքում պետք է գրանցել այն, ինչ ասվում է:

Սակայն եթե տնտեսությունը որևէ սննդատեսակ չի օգտագործում (ասենք՝ բուսակերներ են), ապա տվյալ տնտեսության կողմից օգտագործվող սննդատեսակի առումով օգտագործեք «97» ծածկագիրը:

Հարցեր C32 և C34

Այս հարցերը վերաբերում են ոչ միայն հարցվողների, այլ ամբողջ տնտեսության ընդհանուր ամսական եկամտին:

Հարց C33

Եթե տնային տնտեսության անդամ(ներ)ը կարող են հարակից խանութից վերցնել ապրանք առանց նույն պահին վճարելու, այլ մի քանի օր կամ շաբաթ հետո վճարելու պայմանով, դա նույնպես պետք է համարվի պարտք այս հարցի շրջանակներում:

Հարց C36

Այս հարցը վերաբերում է տնտեսության ընդամենը տարեկան եկամտին: Հարցվողները կարող են դժվարանալ տոկոսային հարաբերությունը հաշվել, այնպես որ խնդրում ենք նրանց բավականաչափ ժամանակ տրամադրել այդ անելու համար:

Հարցեր C38 և C39

Այս հարցերը վերաբերում են ոչ թե միայն հարցվող(ներ)ի, այլ ամբողջ տնտեսության ընդհանուր տարեկան եկամտին:

Հարցեր C41 և C42

Այս հարցերը նույնպես հիմնվում են զուտ հարցվողների ընկալումների վրա և վերաբերում են տնտեսությունների տնտեսական կարգավիճակի (և ոչ թե իրենց կրթական, սոցիալական կամ որևէ այլ կարգավիճակի)՝ իրենց գնահատականին:

Հարց T3

Տնային տնտեսության հարցազրույցի վերջում **T3**-ի տակ գրանցեք հարցազրույցի ավարտի ժամը:

Հարցեր W1-W8

Այս ձևաթուղթը անպայման լրացրեք տնային տնտեսության հարցազրույցի ավարտից անմիջապես հետո:

Անհատական հարցաթերթի տիտղոսաթերթը

Տիտղոսաթերթի 1-ին էջը

Այս էջը հիմնականում Տնային տնտեսության հարցազրույցի տիտղոսաթերթում եղած տեղեկատվության կրկնությունն է: Անպայման լրացրեք հարցազրուցավարի կողմից լրագման ենթակա ամբողջ տեղեկատվությունը և հետևեք հաջորդ էջերին եղած հրահանգներին:

V11 և V12

Այս համարները կկարողանաք լրացնել միայն տնտեսության հարցազրույցի ավարտից հետո, սակայն ամեն դեպքում այս փոփոխականները լրացնելը պարտադիր է:

Տվյալների չգրանցման թերթիկը

Այս թերթիկը լրացրեք պատասխան չստանալու դեպքում: Նման դեպքում առհասարակ մի սկսեք լրացնել հարցաթերթը:

Ձեր ձեռքի տակ լինելու է անհատական հարցաթերթի երկու տարբերակ, որոնցից մեկը Ար տեսակի է, իս մյուսը՝ Իգ: Այս երկու տեսակների միջև միակ տարբերությունը S12 հարցի մեջ է: Ար տեսակի հարցաթերթում հարցերը վերաբերում են տղամարդկանց, իսկ Իգ տեսակում՝ կանանց: Յուրաքանչյուր տեսակից ձեզ կտրամադրվեն հավասար քանակությամբ հարցաթերթեր: Խնդրում ենք անպայման յուրաքանչյուր հաջորդ հարցազրույցի ժամանակ անհատական հարցաթերթի մեկ տեսակից անցքե մյուսին՝ անկախ այն բանից, թե հարցվողն ինչ սեռի է պատկանում: Հարցվողները չպետք է իմանան այս տարբերության մասին:

Դարձյալ, անհատական հարցաթերթի տիտղոսաթերթից անպայման արտագրեք **Երկրի ծածկագիրը և տնային տնտեսության նույնացման համարը**:

Եթե դուք անհատական հարցազրույց եք պլանավորել մեկ այլ օրվա համար, ապա տվյալ տնտեսություն վերադառնալիս անպայման հետներդ վերցրեք տնային տնտեսության լրացված հարցաթերթը, քանզի արդեն ունեցած տեղեկատվության մի մասը կարող է ձեզ անհրաժեշտ լինել, և խիստ կարևոր է հնարավորություն ունենալ նորից անդրադառնալու հարցաթերթի տվյալ մասին:

Հարցազրույցը սկսելուց առաջ խնդրում ենք անպայման նստել բավականաչափ հանգիստ և հարմարավետ սենյակում: Խնդրում ենք այնպես անել, որ **միայն** անհատական հարցազրույցին մասնակցողը ներկա լինի այդտեղ: Հատկացված տեղում (հարց **T5**) գրանցեք անհատական հարցազրույցը սկսելու ամսաթիվը (հարց **T4**, նույնիսկ եթե դա **T1**-ի տակ գրանցված նույն ամսաթիվն է) և ժամը:

Անհատական հարցաթերթում կան մի շարք բաժիններ: Ամեն անգամ, երբ նոր բաժին սկսեք, խնդրում ենք հարցվողին ասել այդ մասին՝ օգտագործելով հետևյալ ձևակերպումները. «**Իսկ հիմա կուզենայի ձեզ հարցնել կրթության մասին**» և այլն:

Բաժին G. Լեզվական և էթնիկ նույնությունը

Հարցեր G1, G4a, G4b և G6

Դուք չպետք է կարդաք հարցաթերթում առկա տարբերակները: Այս հարցի միայն մեկ պատասխան կարելի է ընդունել:

Վրաստանում, եթե հարցվողը պատասխանում է «մեզրել» կամ «սվան», ապա շրջանակի մեջ առեք «վրացի» բառը (ծածկագիր «3»), քանի որ մեզրելն ու սվանը այլ էթնիկ խմբեր չեն:

Հարցեր G2, G3a և G3b

Ի նկատի ունեցեք, որ տարբերակ«4»-ը («Քարթվելական այլ լեզու») ամենայն հավանականությամբ կվերաբերի միայն Վրաստանին:

Վրաստանում, եթե հարցվողը պատասխանի «մեզրելերեն» կամ «սվաներեն», ապա շրջանակի մեջ առեք «Քարթվելական այլ լեզու» արտահայտությունը (ծածկագիր «4»):

Աղյուսակներ G3, G4, G5, G6 և G7

Այս աղյուսակը լրացրեք **սյունակ առ սյունակ**:

G3a սյունակում չի կարելի օգտագործել «Կիրառելի չէ» տարբերակը: Այդ տարբերակը կարելի է օգտագործել G3b սյունակում՝ այն դեպքում, եթե հարցվողը տանը որևէ այլ լեզվով չի խոսում:

Աղյուսակ G4

Այս աղյուսակը լրացրեք **սյունակ առ սյունակ**:

Բաժին J: Զբաղվածություն

Հարց J1

Դարձյալ, «աշխատում են» ասելով հասկանում ենք ոչ միայն որևէ գործատուի հետ գրավոր պայմանագրի վրա հիմնված պաշտոնական զբաղվածությունը, այլև տնային տնտեսության անդամի կողմից կատարվող որևէ տեսակի աշխատանք, այդ թվում՝ ոչ պաշտոնական պայմանավորվածությունները, որոնց համար նրան վճարում են: Այս ենթատեքստում ինքնազբաղվածությունը նույնպես համարվում է զբաղվածության ձև, որովհետև ինքնազբաղ մարդը նույնպես աշխատում և եկամուտ է ստանում: Այսպես, օրինակ, զարդեղենի առևտրականները, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղներն ու եկամուտ ստացողները նույնպես համարվում են «աշխատող»:

Հարց J2

Այստեղ մեզ հետաքրքրում է ներկայումս հարցվողի ունեցած աշխատանքների ընդհանուր թիվը, այդ թվում՝ ամեն տեսակի աշխատանքները, որ մարդը կարող է ունենալ (մշտական, ժամանակավոր, կես դրույթով, լրիվ դրույթով, պաշտոնական, ոչ պաշտոնական և այլն), այդ թվում՝ ինքնազբաղվածությունը՝ ցանկացած զբաղմունք, որը դրամական եկամուտ է բերում:

Հարց 3

Մեզ հետաքրքրում է, թե որ կազմակերպությունում է աշխատում հարցվողը, այլ ոչ թե որքան ժամանակ է զբաղեցնում տվյալ պաշտոնը: Այն դեպքում, երբ հարցվողն աշխատում է տվյալ հաստատությունում 2001 թվականից, փոխել է պաշտոններ և ներկա պաշտոնը զբաղեցնում է 2006 թ-ից, պետք է գրանցվի “2001”:

Հարց J4

Եթե հարցվողը մի քանի տեղ է աշխատում, ապա այս հարցերը տվեք միայն նրա հիմնական աշխատավայրի մասին: Սովորաբար դա լինում է այն աշխատավայրը, որտեղ նա առավել մեծ գումար է վաստակում. այլ դեպքերում դա կարող է լինել նաև այն աշխատավայրը, որն առավել կայուն է, կամ որը համարվում է մշտական: Այստեղ կարելի է ընդունել միայն մեկ պատասխան: Խնդրում ենք նաև հաշվի առնել, որ ինքնազբաղ անձանց երկու կատեգորիայի մեջ էլ («1» և «2») մտնում են նրանք, ուն հիմնական զբաղմունքը հողի վրա աշխատանքն է՝ անկախ այն բանից, թե այն իրենց սեփականությունն է, թե ոչ: «3» և «4» տարբերակներում «տեղական» բառը պետք է հասկանալ բիզնես, որը գործում է տվյալ երկրի կամ նույնիսկ տվյալ մարզի (քաղաքի) սահմաններում՝ ի տարբերություն «միջազգային» բիզնեսի:

Հարց J6

Միայն մեկ պատասխան պետք է ընդունվի այս հարցին: Եթե հարցվողն աճեցնում է գյուղատնտեսական մթերք բայց չի վաճառում այդ մթերքը, հարցի պատասխանը պետք է լինի “այլ” (կոդ 10): Սա կարող է տարածված դեպք լինել գյուղացիների շրջանում:

Հարց J8

Այս հարցում “գործազուրկ” նշանակում է, որ հարցվողը չունի աշխատանք, անկախ նրանից, թե տվյալ անձը գրանցված է գործազրկության գործակալությունում, թե՛ ոչ:

Աղյուսակ J11

Այս աղյուսակը լրացրեք **սյունակ առ սյունակ**:

«Կիրառելի չէ» արտահայտությունը վերաբերում է այս աղյուսակի միայն երկրորդ սյունակին, քանի որ այս հարցը չի կարող կիրառելի լինել առաջին սյունակի համար (մենք ակնկալում ենք, որ պատասխանողը անվանի այդպիսի գոնե մեկ գործոն. և եթե նույնիսկ չկարողանա պատասխանել հարցերին, ապա այդ դեպքում մենք ունենք պահուստային «98» և «99» ծածկագրերը):

Բաժին E. Կրթություն

Հարց E1

Այստեղ գրեք հարցվողի՝ պաշտոնական կրթության համակարգում ուսումնառության տարիների թիվը (կրթական հաստատությունում հարցվողի անցկացրած տարիների թիվը)՝ սկսած տարրական դպրոցի առաջին դասարանից մինչև իր ավարտած կրթական ամենաբարձր մակարդակը:

Եթե կրթության գործընթացում ընդհատում է եղել, ապա այդ ընդհատումը չպետք է հաշվի առնել: Օրինակ, եթե հարցվողն ավարտել է միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանը, իսկ այնուհետև՝ տեխնիկումի ևս երեք տարիները, ապա պատասխանը կլինի՝ (9+3)=«12 տարի»: Եթե անձը միջնակարգ դպրոցում սովորել է 11 տարի՝ 1989-1990թթ. և միջնակարգ մավարտելուց անմիջապես հետո կրթությունը շարունակել բուհում ևս 5 տարի՝ 1990-1995թթ., ապա կրթության վրա ծախսված տարիների ընդհանուր թիվը կկազմի (11+5)=«16 տարի»:

Մյուս կողմից, եթե անձը միջնակարգ դպրոցում սովորել է 11 տարի՝ 1989-1990թթ., այնուհետև սկսել է աշխատել և 4 տարի աշխատելուց հետո բուհ է ընդունվել, որտեղ սովորել է ևս 6 տարի՝ 1994-2000թթ., ապա, կրթության վրա ծախսված տարիների ընդհանուր թվի մեջ չպետք է հաշվի առնել այն 4 տարիների ժամանակամիջոցը, երբ այդ անձը աշխատում էր և չէր սովորում. փոխարենը, այդ անձի կողմից կրթության վրա ծախսած տարիների ընդհանուր գումարը կկազմի (11+6)=«17 տարի»:

Իսկ միջնակարգ դպրոցում 11 տարի սովորած մարդու համար, որը դպրոցն ավարտելուց անմիջապես հետո 5 տարի սովորել է բուհում և այնուհետև ևս 4 տարի՝ ասպիրանտուրայում, կրթության վրա ծախսված տարիների ընդհանուր թիվը կկազմի (11+5+4)=20 տարի:

Ձեզանից ակնկալվում է այստեղ գրանցել միայն **տարիների հանրագումարը** և ոչ թե այն բաժանել միջնակարգ և միջնակարգից հետո ստացած կրթության տարիների:

Այս հարցում մեզ հետաքրքրում է միայն կրթության վրա ծախսված տարիների ընդհանուր թիվը, անկախ այն բանից, թե հարցվողը համապատասխան աստիճանը ստացել է, թե ոչ:

Խնդրում ենք հաշվի առնել, որ այստեղ չի կարելի նշել ժամանակային միջակայքեր (օր.՝ 10-12 տարի), այլ պետք է գրել մեկ թիվ, որն արտացոլում է հարցվողի՝ կրթության վրա ծախսած տարիների ընդհանուր թիվը:

Հարց E2

Այստեղ մեզ չի հետաքրքրում երիտասարդ հարցվողների կողմից նշվելիք միջնակարգ դպրոց հաճախելու (ավարտելու) դեպքերը:

Հարց E3

Տարբերակ «1»-ում մեզ հետաքրքրում են այն հարցվողները, որոնք մասնակցում են իրենց առաջին կրթական ծրագրին, օրինակ՝ բուհական ծրագրին:

Տարբերակ «3»-ում, «Փոխել մասնագիտությունս» հասկացության մեջ մտնում է «նոր մասնագիտության ձեռքբերում»:

Հարցեր E3 և E6

Եթե հարցվողը վերջին 3 տարիների ընթացքում մասնակցել է մի քանի կրթական ծրագրերի, ապա այս հարցերը տվեք այդ ծրագրերից վերջինի վերաբերյալ:

Հարց E9, Աղյուսակ E9

Այս աղյուսակը լրացրեք **շարք առ շարք**:

Յուրաքանչյուր շարքի համար ընդունեք միայն մեկ պատասխան: Եթե հարցվողը համապատասխան թեմայից (ոլորտից) որևէ հիմնական գիտելիք չունի, ապա շրջանակի մեջ առեք «0»-ն:

Աղյուսակ E12

Այս աղյուսակը լրացրեք **սյունակ առ սյունակ**:

Բաժին H. Առողջություն

Հարց H 3a

Այս հարցի պատասխանը պետք է լինի «այո», եթե նույնիսկ հարցվողն այցելել է առողջապահական հաստատություն ոչ բուժման նպատակով, այլ, օրինակ, փաստաթուղթ վերցնելու համար:

Հարց H4

Եթե հարցվողը գնացել է առողջապահական հաստատություն ոչ բուժման նպատակով, կարող եք նշել կողմ '97' - ավելացրեք այն հարցաթերթում:

Հարցեր H7 և H8

Հարց H7-ը վերաբերում է հիվանդության կամ վնասվածքի պատճառով իր հիմնական աշխատանքները կատարելու անկարողությանը և կիրառելի է բոլոր հարցվողների համար՝ անկախ այն բանից, թե նրանք ախտաճանձր ունեն, թե ոչ, մինչդեռ H8 հարցը վերաբերում է կոնկրետ այն բանին, թե արդյոք նրանք չեն ներկայացել աշխատանքի:

H7 հարցին հարցվողը կարող է պատասխանել «2 օր», այսինքն՝ լավ չի զգացել, որի պատճառով արդյունավետ չի աշխատել (խոսքը վերաբերում է աշխատանք ուեցողներին), իսկ H8 հարցին՝ «0 օր» (այսինքն, նա աշխատանքի ներկայացել է՝ չնայած վատառողջ է եղել):

Հարց H9

Եթե հարցվողը ծխող չէ, գրեք «0»: Եթե հարցվողը շաբաթական մեկ սիգարետից պակաս է ծխում, շրջանակի մեջ առեք «997» ծածկագիրը («Կիրառելի չէ»): H11 հարցին անցումը այստեղ նույնպես վրիպակ է, քան այն Ձեր հարցաթերթում:

Հարց H11

Այստեղ ի նկատի է առնվել խմիչքի 4 և ավելի քաժակը, ոչ թե՝ լիտրը, շիշը և այլն: Բաժակների թիվը հաշվվում է հետևյալ կերպ: Թունդ ալկոհոլային խմիչքների դեպքում դա մեկ կումն է, գինու դեպքում՝ գինու մեկ բաժակը, գարեջրի դեպքում՝ գարեջրի մեկ շիշը:

Հարց H14

«Սեռական առողջություն և ընտանիքի կազմում» ասելով հասկանում ենք տեղեկատվություն առողջ սեռական կյանքի վերաբերյալ:

Բաժին S. Սոցիալական կապիտալ

Չափ S3

Տարբերակ J-ում («Ընթերցել են ռեստորանում»), մեզ հետաքրքրում է ռեստորանում ընթերցելու բուն փաստը, անկախ այն բանից, թե հարցվողն իր հաշվին է գնացել ռեստորան, հրավիրվել է ուրիշներից կամ թե արդյոք դա իր համար սովորական ապրելակերպ է թե ոչ: Այս տարբերակը պետք է շրջանակի մեջ առնել, եթե հարցվողը ռեստորանում առհասարակ ընթերցել է վերջին 6 ամսվա ընթացքում՝ անկախ այն բանից, թե այդ ընթերցի կոնկրետ հանգամանքները որոնք են եղել:

Չափ S7

Այստեղ ի նկատի է առնված հարցվողի՝ այս կամ կրոնին հարելը, ոչ թե պաշտոնական անդամակցությունը:

Չափ S9

«Կրոնական ծառայություններ» նշանակում է պաշտոնական կրոնական ծառայություններ (ծիսակատարություններ):

Չափ S12

Ինչպես նշել ենք վերևում, ձեզ մոտ եղած հարցաթերթերի կեսում այս հարցը վերաբերում է տղամարդկանց, իսկ մյուս կեսում՝ կանանց: Աղյուսակ S12-ից առաջ դուք ունեք հարցաթերթում նախօրոք ծածկագրված համապատասխան ծածկագիրը: Այդ ծածկագրում ոչինչ մի փոխեք:

Խնդրում ենք՝ մի փորձեք որևէ «ճշգրտում» անել այս հարցի մեջ, փոխարենը հարցը տվեք ճիշտ ձեր ունեցած հարցաթերթում տպագրված ձևակերպմամբ:

Աղյուսակ S13

Այս աղյուսակը լրացրեք **սյունակ առ սյունակ**:

Այս հարցի առնչությամբ ակնկալվում է, որ Հայաստանում հարցը կտաք հայերի (ծածկագիր 7), Ադրբեջանում՝ ադրբեջանցիների (ծածկագիր 8), իսկ Վրաստանում՝ վրացիների (ծածկագիր 9) մասին:

Հարցումները վերաբերում են բոլոր երկրների բոլոր էթնիկ խմբերին, բացի վերջին երկու էթնիկ խմբերից, որ կոնկրետ Վրաստանին է վերաբերում: Եթե աշխատում եք Վրաստանում, ապա խնդրում ենք անպայման հարցնել նշված երկու էթնիկ խմբերի մասին: Եթե աշխատում եք որևէ այլ երկրում, բացի Վրաստանից, ապա ՄԻ ՀԱՐՑՐԵՔ այս երկու էթնիկ խմբերի մասին:

Բաժին R: Հանցավորություն

Չափ R1, Աղյուսակ R1

Այս աղյուսակը լրացրեք **շարք առ շարք**:

«Կիրառելի չէ» տարբերակը պետք է շրջանակի մեջ առնել միայն այն դեպքում, եթե հարցվողը երբեք չի կարող գտնվել աղյուսակում նշված վայրում, օրինակ՝ շարք 2-ում՝ եթե հարցվողը և գործազուրկ է, և ուսանող չէ:

Շարք 4-ում («Հասարակական և հանգստի վայրերում (թատրոն, ռեստորան և այլն)») ի նկատի ունենք այն, որ հարցվողն ինքնուրույն կերպով է այցելել այդ վայրերը՝ առանց որևէ մեկի ընկերակցության, թեև այնտեղ կարող են գտնվել ցանկացած թվով մարդիկ, որոնք որևէ հոգս ունեն հարցվողի հետ:

Չափ R2, Աղյուսակ R2

Այս աղյուսակը լրացրեք **շարք առ շարք**:

Չափ R6, Աղյուսակ R6

Այս աղյուսակը լրացրեք **շարք առ շարք**:

Բաժին P. Քաղաքական վերաբերմունքը

Չափ P5

Խնդրում ենք անպայման հասնել այն բանին, որ հարցվողը նշի տեղեկատվության միայն 3 առավել կարևոր աղբյուրները: Նա, անշուշտ, կարող է ունենալ տեղեկատվության ավելի շատ աղբյուրներ, բայց նրանից պահանջվում է նշել առավել կարևորները: Կարող է այնպես պատահել, որ հարցվողը նշի միայն այն աղբյուրները, որոնք առավել կարևորն են իր համար. դա կարող է լինել այն դեպքերում, երբ հարցվողը նշում է մեկ կամ երկու աղբյուր և ավելին չի կարողանում նշել. սա ընդունելի է, եթե դուք չնոռանաք հարցնել երկրորդ կարևոր և երրորդ կարևոր աղբյուրների մասին: Եթե հարցվողը չի կարող մտաբերել տեղեկատվության երկրորդ և (կամ) երրորդ հիմնական աղբյուրը, ապա շրջանակի մեջ առեք «97» ծածկագիրը, այն է՝ «Կիրառելի չէ»:

Յուրաքանչյուր սյունակի համար չի կարելի ընդունել մեկից ավելի պատասխան:

Հարց P6, Աղյուսակ P6

Այս աղյուսակը լրացրեք **սյունակ առ սյունակ**:

Հարց P7

Այս հարցը վերաբերում է հարցվողի կյանքի ընթացքում տեղի ունեցած որևէ քաղաքական իրադարձության, որն ինքը համարում է առավել հիշարժանը. այդ իրադարձությունը կարող է պատահած լինել աշխարհի ցանկացած երկրում և հարցվողի կյանքի ցանկացած ժամանակաշրջանում:

Սա հարցաթերթի միակ հարցն է, որը նախապես ծածկագրված չէ և որի դեպքում մենք ձեզ խնդրում ենք գրի առնել հարցվողի պատասխանը: Խնդրում ենք անպայման գրանցեք այն, ինչ հարցվողն ասում է ձեզ՝ հենց հարցվողի սեփական բառերով՝ նույնիսկ եթե նրա պատասխանը տարօրինակ համարեք, և փորձեք ճշտել տվյալ իրադարձության տեղի ունենալու տարին և վայրը: Եթե այնուամենայնիվ հարցվողի պատասխանը չափազանց երկար է, խնդրեք, որ ամփոփի պատասխանն այնպես, որ կարողանաք գրանցել այն: Մենք ձեզ խնդրում ենք գրել այլ մարդկանց համար դյուրընթեռնելի ձեռագրով, քանի որ այս հարցին տրված պատասխանների վերլուծության վրա այլ մարդիկ են աշխատելու:

Հարց P8

Այս հարցը կիրառելի է հարցազրույցի անցկացման երկրում տեղի ունեցած վերջին նախագահական և խորհրդարանական ընտրությունների առումով: Սակայն այս հարցը ՉԻ վերաբերում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը:

Հարց P9

Մի ընթերցեք հարցաթերթում առկա տարբերակները. – հարցվողը պետք է հարցին պատասխանի առանց ձեր կողմից օգնության: Չի կարելի ընդունել երկուսից ավելի պատասխան, այնպես որ եթե հարցվողը թվարկում է քվեարկությանը չմասնակցելու երկուսից ավելի պատճառ, խնդրեք նրան անվանել առավել կարևոր պատճառները և՛ ոչ ավելի, քան երկուսը:

Հարցեր P14 և P15, Աղյուսակ P14

Այս աղյուսակը լրացրեք **սյունակ առ սյունակ**:

Նախ, հարցնելու եք Աղյուսակ P14-ում թվարկված ինը երկրների (կամ միությունների) հետ հարցազրույցի անցկացման երկրի տնտեսական (P14) և քաղաքական (P15) համագործակցության նկատմամբ հարցվողի վերաբերմունքի մասին: Մենք ուզում ենք, որ հարցվողները իրենց վերաբերմունքը արտահայտեն ըստ 1-ից 10 սանդղակի, որտեղ «1»-ը նշանակում է «համագործակցություն չկա», իսկ «10»-ը՝ «լիարժեք համագործակցություն»: Չպետք է նշել «98» և «99» ծածկագրերը. դրանք օգտագործեք միայն այն դեպքում, երբ հարցվողը հստակորեն չի կարողանում արտահայտել իր միտքը, կամ հրաժարվում է պատասխանել հարցին՝ տվյալ երկրի առնչությամբ:

Աղյուսակ P14-ում նշված երկրների մասին հարցրեք մեկ առ մեկ՝ հետևելով աղյուսակում եղած հերթականությանը, ընդ որում յուրաքանչյուր հաջորդ երկիրը նշեք միայն նախորդ երկրի մասին պատասխան (գնահատական) ստանալուց **հետո**: Այս հարցի բոլոր պատասխանները պետք է գրվեն Աղյուսակ P14-ի համապատասխան սյունակում:

ԿԱՐԵՎՈՐ Է. Աղյուսակ P14-ի վերջում մենք հարցնում ենք Հարավային Կովկասի երկրների վերաբերյալ:

Հարցաթերթը նույնն է բոլոր երկրներում, այնպես որ բոլոր երեք երկրներն էլ առկա են այս աղյուսակում:

Այնուամենայնիվ, դուք չպետք է հարցնեք այն երկրի մասին, որտեղ տեղի է ունենում հարցազրույցը: Այսպես, եթե հարցազրույցը տեղի է ունենում Հայաստանում, դուք չպետք է հարցնեք Հայաստանի հետ գործակցության վերաբերյալ հարցվողների վերաբերմունքի մասին, անկախ այն բանից, թե որ էթնիկ խմբի ներկայացուցչի հետ եք հարցազրույց վարում:

Հարց P16

ԿԱՐԵՎՈՐ Է. Այս հարցը տալիս, դուք պետք է նշեք հարցազրույցի անցկացման երկրի միայն մեծամասնության լեզվի մասին. Հայաստանում՝ հայերենի, Ադրբեջանում՝ ադրբեջաներենի և Վրաստանում՝ վրացերենի մասին՝ դարձյալ անկախ այն բանից, թե որ էթնիկ խմբի ներկայացուցչի հետ եք հարցազրույց վարում:

Հարց P19, Աղյուսակ P19

Այս աղյուսակը լրացրեք **շարք առ շարք**:

Հարց T6

Տնային տնտեսության հարցազրույցի ավարտին, **T6**-ում գրանցեք հարցազրույցի ավարտման ժամը:

Հարցեր W9-W18

Այս ձևաթուղթն անպայման լրացրեք անհատական հարցազրույցի ավարտից անմիջապես հետո:

Բաժին B. Կոռուպցիա

Հարցեր B1 և B2

Մի՞ կարդացեք բարձրաձայն այս հարցերի #3 տարբերակը:

Աղյուսակներ B3 և B4

Հարցազրույցի ընթացքում փոփոխեք աղյուսակներում նշված բնագավառների դասավորությունը յուրաքանչյուր հաջորդ հարցազրույցի ժամանակ. եթե առաջինի ժամանակ կարդացել եք Աղյուսակ B3 1-14-ը, ապա հաջորդի ժամանակ կարդացեք 14-1-ը, հետո նորից 1-14-ը, և այդպես շարունակ: Նույնը վերաբերում է նաև Աղյուսակ B4: Լրացեք աղյուսակները տող առ տող:

Հարցեր B5.1 և B5.2

Տարբերակ “C”-ն նշանակում է, որ գոյություն չունի խողովակային ջրամատակարարում:

Աղյուսակ B5

Լրացրեք աղյուսակը սյունակ առ սյունակ:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՐՑՎՈՐԻ՝ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՀԱՄԱՐԸ

Խիստ կարևոր է հարցաթերթի այս մասը լրացնել տվյալ տնտեսությունում երկու հարցազրույցներն ավարտելուց անմիջապես հետո:

Վստահացեք, որ տնային տնտեսության հարցազրույցը ավարտվել է հենց այդ տնային տնտեսությունում: Մանրամասն հետևեք հարցաթերթի հրահանգներին: